ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ
№2024-8-2-Ա

ք. Երևան 29.08.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի օգոստոսի 29-ի նիստում քննարկեց 2024 թվականի հունիսի 5-ին ներկայացուցիչ Ջանիկ Իվանյանի կողմից ներկայացված «Ֆրունզե էսթեյթ վայնրի» ՍՊԸ ընկերության (Վայոց Ձորի մարզ, գ. Աղավնաձոր, ԱՄ) «ՖՐՈՒՆԶԵ FRUNZE» (No20231798) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտում նշված՝ 12 -րդ դասի «վագոն – ռեստորաններ» ապրանքի, 35-րդ դասի «առցանց պատվիրման ծառայություններ ռեստորաններից սննդի դուրս հանման և առաքման ոլորտում», 41-րդ դասի «գիշերային ակումբ-սրճարանների ծառայություններ (զվարճություններ)» և 43-րդ դասի «սննդամթերքի պատրաստում և տրամադրում (քեյթրինգ). սրճարանների ծառայություններ. նախաճաշարանների ծառայություններ. ճաշարանների ծառայություններ. ռեստորանների ծառայություններ. ինքնասպասարկման ռեստորանների ծառայություններ. խորտկարանների ծառայություններ. բարերի ծառայություններ. վաշոկու ռեստորանների ծառայություններ. արիշտա ուդոնի և արիշտա սոբայի ռեստորանների ծառայություններ. տեղեկություն և խորհրդատվություն սննդի պատրաստման հարցերով. անձնական խոհարարի ծառայություններ. նարգիլեի բարերի ծառայություններ. սնունդը դուրս հանելու ռեստորանների ծառայություններ» ծառայությունների համար հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 111- րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի

առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան վերը նշված դասերի ապրանքների և ծառայությունների համար, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործվող՝ «FRUNZE taste the nature» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկատվությունն առկա է՝ https://www.facebook.com/profile.php?id=100095293178812&sk=photos ինտերնետային կայքում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը նշեց, որ կոլեգիան դեռ ձևավորված կարծիք չունի հարցի վերաբերյալ, քանի որ որոշ հարցերի պատասխաններ կոլեգիան կցանկանար ճշտել բողոքարկողից: Հարցերի պատասխանները ստանալուց հետո կոլեգիայի նախագահը հնչեցրեց կոլեգիայի որոշումը այն մասին, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան կրկնական փորձաքննության որոշման մեջ նշված դասերի ապրանքների և ծառայությունների համար, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործվող՝ «FRUNZE taste the nature» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկատվությունն առկա է՝ https://www.facebook.com/profile.php?id=100095293178812&sk=photos ինտերնետային կայքում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Բողոքարկողի ներկայացուցիչը պնդում էր, որ բողոքը պետք է բավարարվի:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում 7 կողմ և 1 դեմ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Ներկայացուցիչ Ջանիկ Իվանյանի կողմից ներկայացված «Ֆրունզե էսթեյթ վայնրի» ՍՊԸ ընկերության «ՖՐՈՒՆԶԵ FRUNZE» (No20231798) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փոր ձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ